

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԿՐԻՒԹՅԱՆ ԿԱՐԴԱՐԱՆԻ

ՏԱՐԵԿԱՆ ԳԱՇՏԱՀԱՆԳԻՍ Ս. ԹԱՐԳՄԱՆԶԱՅ ԵՐԿՐԻՒԹՅԱՆ ԿԱՐԴԱՐԱՆԻ

Կիրակի, 8 Մայիս, կէսօրէ ետք ժամը 4ին, նախկին ժողովուրդաց
Վարժարանի մարդադասը լեցուն էր արդէն ժողովուրդի ստուար բայց կոկիկ
բաղմութեամբ: Մեծ մասով ծնող՝ անոնք եկած էին Հանդիսատես ըլլալու ի-
մացական ուսումներու քովն ի վեր դպրոցէն ներս աշակերտութեան ջամբուած
Ֆիզիքական կրթանքի նուաճումներուն:

Վարժարանի երկեսն մարդիկներու տողանցքէն ետք ընթացք առաւ
մօտ երկու ժամեր տեւող յայտադիր մը, բաղկացած մագերէտ, մարզանքներէ,
դրօշարշաւէ, պարանաձգութենէ եւայլն, որոնք բոլորն ալ կատարուած յա-
ջողութեամբ՝ իրենց վրայ կեդրոնացած պահէլ յաջողեցան անձանձորոյ ինչ-
ւորքը Հանդիսականներուն:

Այս տարի եւս Վարժարանի ընդհ. մարզիչն էր Պրն. Յակոբ Մէնէշ-
եան: Թէ՛ մանչեր եւ թէ՛ աղջիկներ, ըստ նախընթացի, բաժնուած էին երկուս-
կան մրցոյց խումբերու (տղաք՝ կարմիր եւ կանաչ, աղջիկներ՝ կապոյտ եւ
մարդապոյն): Նախորդ տարիներու նման այս տարի եւս յաղթանակը մի՛ճակ-
եցաւ կարմիր խումբին:

Հանդէսի աւարտին, Վարժարանի Տեսուչ Գերշ. Տ. Կիւրեղ Եպիսկո-
պոս բաժակներով ու մէտալներով պարգեւատրեց յաջող մարդիկները:

ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆՐԱՊԵՏ ՄԱՆԿԱՊԱՐՏԷՋԻ ԲԱԺԻՆ

Տարիներէ ի վեր սովորութիւն եղած է այս Հանդէսը կատարել Հայ
Երիտասարդաց Միութեան ակումբին մէջ, իր ունեցած յարմարութիւններուն
համար: Այս տարուանը կայացաւ 5 Յունիս, Կիրակի կէսօրէ ետք ժամը 4ին, ի
ներկայութեան ծնողներու եւ հետաքրքիրներու ստուար բաղմութեան:

Այս Հանդէսն ալ տեւեց մօտ երկու ժամ, բաւական ճոխ ու յաջող
յայտադրի մը գործադրութեամբ, բուն ծափեր խլելու չափ Հանդիսականնե-
րէն: Մանկապարտէզի երեք ուսուցիչները ինք ամիսներու նուիրեալ ու սրտա-
դին աշխատանքով ոչինչ խնայած էին մեր մանուկներու բարուք դաստիարա-
կութեան համար: Այդ կը վկայէին կատարուած արտասանութիւնները, հա-
կիրճ տրամախօսութիւնները եւ մանաւանդ հայկական պարերը:

Հանդէսի աւարտին, ընթացաւարտ դասարանի 14 փոքրիկները ստա-
ցան իրենց վկայականները Տեսուչ Սրբազան Հօրմէն, որ իր խօսքը ուղղելով
ներկաներուն շնորհ ղերն ու արժէքը հայկական դպրոցին, մանաւանդ սփիւռ-
քի յուսալքիչ պայմաններուն ներքեւ:

Հանդէսը փակուեցաւ Սրբազան Հօր «Պահպանիչ»-ով ու միաբերան
երգուած Տէրունական ազօթքով:

ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԷՍ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԲԱԺՆԻ

Տեղի ունեցաւ 12 Յունիս, Կիրակի, Երեկոյեան ժամը 6-30ին, Վարժարանի սրահին մէջ, որ ժամանակէն առաջ իսկ լեցուած էր ծնողներու եւ հրաւիրեալներու բազմութեամբ: Հանդէսին կը նախադաշէր Ամեն. Պատրիարք Ս. Հայրը: Ներկայ էին նաեւ Գերշ. Սրբազաններ եւ Հոգեշնորհ Հայրեր:

Թարգմանչաց նուիրուած «Նմանեալ Մովսէսի» շարականի երգեցողութենէն ետք ընթացք առաւ երկու մասերէ բաղկացած յայտագիր մը, որուն առաջին բաժնին մէջ ընթացաւարտ դասարանի աշակերտներէն երկուքը ներկայացոյցին Հայ Թատերադրութեան հիմնադիր Գարբիէլ Մունդուկեանի կեանքը ու զործը, անոր ծննդեան 150ամեակին առթիւ: Մէջ ընդ մէջ եղան խմբերգներ եւ արտասանութիւններ:

Հանդէսի երկրորդ բաժնին մէջ Տեսուչ Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գաբիկեան կարդաց մասեր Վարժարանի տարեկան տեղեկագրէն, որ կ'երեւի Սիոնի ներկայ թիւին մէջ: Շրջանաւարտներէն մին սրտաբուխ ուղերձով մը իր անկեղծ զգացումները արտայայտեց այս նշանակալից հանգրուանին առթիւ, եւ իր ու իր ընկերներուն շնորհակալութեան զգացումները՝ Ս. Պատրիարք Հօր կողմէ գլխաւորուած վանական իշխանութեան, Գերշ. Տեսուչ Սրբազանին եւ ուսուցչական կազմին:

Վկայականներու եւ մրցանակներու բաշխումէն ետք երգուեցաւ հրաժեշտի երգը: Հանդէսը փակեց Ամեն. Պատրիարք Ս. Հայրը, յորդորելով շրջանաւարտները որ լաւապէս պտղաբերեն ինչ որ ջամբուեցաւ իրենց վարժարանէն ներս, ըլլալու համար արժանաւոր դասակները մեր տարարախտ ժողովուրդին:

Հանդէսը փակուեցաւ միաբերան երգուած «Հայր մեր»ով: